VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:*

Ուսումնական միջավայրի բարելավումը մշտապես իրականացվող գործընթաց է և հանդիսանում է ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարության կարևոր առաջնահերթություն և ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման նյութատեխնիկական պայմանների բարելավումը ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրում ներառված է 5-րդ նպատակում (**խնդիրներ 5.1, 5.2**): Մասնաճյուղն իր ռազմավարությամբ ձգտում է ձևավորել կրթական ծրագրերի իրականացման պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ: Նրա նպատակն է արդիականացնել մասնաճյուղի ենթակառուցվածքները, զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները՝ տեխնոլոգիապես վերազինելով նրանք, բարելավել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերն ու գրադարանային ենթակառուցվածքները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:	
Արդյո՞ք ուսումնառողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	**71%**
Արդյո՞ք դասավանդողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	**83,3%**

Կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձևավորման համար մասնաճյուղը ձգտում է ստեղծել որակյալ ենթակառուցվածքներ, զարգացնել և բարելավել դրանք: Մասնաճյուղի առկա և հեռակա ուսուցման համակարգերի կրթական ծրագրերի իրականացումը կազմակերպվում է 56 լսարաններով 2 մասնաշենքերում: Երկիերթ ուսուցման կազմակերպման համար մասնաճյուղի ունեցած ուսումնական տարածքները մեկ ուսանողին ընկնող մակերեսի չափով լիովին բավարարում են ՀՀ ԿԳ նախարարության կողմից ներկայացվող լիցենզավորման պայմաններին (ԳԱՑ 2014-19, **ցուցանիշ 4.1, 4.2, 4.3**):

Յուրաքանչյուր տարի մասնաճյուղի բյուջեով գումարներ են հատկացվում մասնաշենքերի, լաբորատորիաների ու այլ շինությունների վերանորոգման և արդիականացման աշխատանքների իրականացման համար (**8-րդ հոդված**): Արդյունքում, մասնաշենքերը հնարավորինս վերանորոգված, կահավորված և տեխնիկապես հագեցված են: Մասնաճյուղում գործում են ուսումնական 2 լաբորատորիաներ, համակարգչային 4 սրահներ, ինտերակտիվ ուսուցման 1 (On-line) լսարան և դասընթացների անցկացման 11 լսարան, 4 արվեստանոց: Լաբորատորիաներն ունեն բավարար նյութատեխնիկական բազա, նախատեսվում է ստեղծել ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր լաբորատորիաներ: Մասնաճյուղը պլանավորում է ՀՀ Ազգային ագրարային համալսարանի հետ համատեղ իրականացնել գյուղատնտեսական ոլորտի մի շարք համատեղ կարճատև վերապատրաստման ծրագրեր մարզի ֆերմերների և այլ գործատուների համար, ինչի համար մասնաճյուղում կստեղծվի հողի, ջրի, անասունների կերի և գյուղմթերքների անալիզների հետազոտական լաբորատորիա:

Մասնաճյուղում ներդրվել է անվտանգության ժամանակակից համակարգ, կիրառական արվեստի ֆակուլտետի խեցեգործության արվեստանոցում տեղադրվել է կավի թրծման վառարան,

գրադարանի համար ստեղծվել է գրապահոց, ընթացիկ քննությունների անցկացման համար 4 լսարաններում տեղադրվել են տեսանկարահանող սարքեր և այլն:

Մասնաճյուղն իր ռազմավարությամբ իրականացնում է դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականություն և կարևորում է մասնագիտական և համակարգչային լաբորատորիաների, գրադարանի, ամբիոնների և այլ ենթակառույցների արդյունավետ և նպատակային օգտագործումը, որոնց արդիականացման և լիարժեք օգտագործման համար հատկացվում են բավականին նյութական ռեսուրսներ (**հոդվածներ 7, 8.4, 8.6, 8.8, 10.16**), և հարկ է նշել, որ նրանց շարունակական բարելավման համար անհրաժեշտ կլինեն նոր կոմունիկացիոն և ֆինանսական հնարավորություններ:

Մասնաճյուղն ունի 3 գրապահոցով և համակարգիչներով հագեցած 1 ընթերցասրահով գրադարան: Գրապահոցներում առկա է շուրջ 19237 միավոր գրականություն և գիտական ամսագիր, ընթերցասրահը տրամադրում է ավելի քան 2100 անուն էլեկտրոնային գրականություն, դիսկադարան, ունի էլեկտրոնային քարտադարան: 2017թ. դեկտեմբերից գործող գրադարանի էլեկտրոնային կայքի միջոցով (http://ijevanlib.ysu.am/) ուսանողներին հասանելի են շուրջ 960 գիրք և ամսագիր: Գրադարանը տարեկան համալրվում է մոտ 970 միավոր գրականությամբ:

2019 թվականին ձեռք է բերվել միկրոկոնտոլեր իր կենտրոնացված սարքերով, որը հնարավորություն է տալիս ուսանողներին գործնականում կիրառել ծրագրավորման լեզուներով գրված ծրագրերը: «Քարտեզագրություն և կադաստրային գործ» կրթական ծրագրի ուսումնառողներն իրենց մասնագիտական կարողությունները զարգացնում են ուսումնական գործընթացում կիրառելով Մայր բուհից նվեր ստացած էլեկտրոնային տախեոմետրը:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտը ԵՊՀ ԻՄ-ի վարչակազմի ուշադրության կենտրոնում է: Վերջին տարիներին զգալի նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսներ են հատկացվել, ինչի արդյունքում այսօր ԵՊՀ ԻՄ-ի համակարգչային ցանցն իր ծավալներով, տեխնիկական հագեցվածությամբ և որակական բնութագրերով ստեղծում է միասնական տեղեկատվական միջավայր, համապատասխանում է ներքին շահակիցների պահանջներին և միտված է գիտամանկավարժական հետազոտությունների և կրթության գործընթացում ուսանողների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը:

Մասնաճյուղի շուրջ 180 համակարգիչները միացված են ներքին ցանցով, որն ապահովում է ստորաբաժանումների միջև էլեկտրոնային ինֆորմացիայի արագ փոխանակությունը և նվազեցնում է թղթաշրջանառությունը: Ստորաբաժանումներն օգտվում են նաև էլ. փոստի ծառայություններից: Մասնաճյուղն իր ուսանողներին և դասախոսներին ապահովում է **գերարագ և անվճար ինտերնետով**: Բացի այդ՝ անվճար Wi-Fi անկյուններ կան բնական գիտությունների ֆակուլտետում և մասնաճյուղի գրադարանում:

ԵՊՀ ԻՄ-ն հրավիրված դասախոսների հանգստի, ստեղծագործելու և գիշերելու համար կառուցել և շահագործում է հարմարավետ ու տեխնիկապես հագեցած հյուրանոցային համալիր: Մայրաքաղաքից ժամանող դասախոսների տեղափոխումը մասնաճյուղը կազմակերպում է «Գազել» մակնիշի միկրոավտոբուսով և «ՀՅՈՒՆԴԱՅԻ» մակնիշի հարմարավետ ավտոբուսով: 2020թ. պլանավորվում է ձեռք բերել նոր միկրոավտոբուս:

Կրթական և հետազոտական ծրագրերի կարիքների արդյունավետ բավարարման համար ստեղծվել են նաև «Դիզայնի» լաբորատորիա և «Հագուստի մոդելավորման» արվեստանոց, անգլերեն և ֆրանսերեն լեզուների ուսուցման մասնագիտացված լսարան-կաբինետներ, ստեղծվել է տեխնոլոգիական կարողությամբ համակարգչային նոր լաբորատորիա՝ ապահովված ինտերակտիվ ուսուցման անհրաժեշտ սարքավորումներով, 2018թ. հուլիսին Հայաստանում գիտության և

մշակույթի ռուսական կենտրոնի (ԳՄՌԿ) աջակցությամբ բացվել է Ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոն, 2020թ. փետրվարին «ՓիԷյչ» Ինթերնեշնլ կազմակերպությունը ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից հովանավորվող և իր կողմից իրականացվող **«Տավուշում կրթական-տեղեկատվական դասընթացներ ծրագրի» (AM Tavush Outreach Program)** իրագործման շրջանակներում մասնաճյուղում բացել է «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»՝ կրթական, մշակութային և տեղեկատվական միջոցառումներ, տարբեր թեմաների շուրջ ուսումնական կարճատև դասընթացներ կազմակերպելու համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

ԵՊՀ ԻՄ-ում ֆինանսական հոսքերի կառավարումը և վերահսկողությունը իրականացնելու նպատակով կազմվում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ, իսկ ֆինանսական տարվա ավարտից հետո փաստացի տվյալների վերլուծությունների հիման վրա ներկայացվում է տարեկան բյուջեի կատարողականը: 2019թ.-ի ԵՊՀ ԻՄ-ի բյուջեի մուտքային մասի **73%-ը** կազմում են ուսման վճարները (**հոդված 1.1**), այդ թվում **15%-ը** կազմում են բարեգործական, **25%-ը** պետական ֆինանսավորումից և **2%-ը** այլ եկամուտները:

Ֆինանսական հոսքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած վերջին տարվա առկա վճարովի համակարգով ուսանողների թվաքանակի նվազմանը, զուգահեռ ավելացել է հեռակա սովորող ուսանողների թիվը: Սակայն ավելացել են նոր ծախսեր. պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձն ավելացել է **17%**-ով, ավելացել են պարտադիր սոցիալական վճարները, ուսումնական գործընթացի որակի բարձրացման, կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման և ստորաբաժանումներում աշխատանքային գործունեության բարելավման նպատակով ձեռք են բերվել համապատասխան ռեսուրսներ (վերջին երկու տարիներին իրականացվել է համակարգչային տեխնիկայի համալրում և դրանց հնարավորությունների մեծացում, մասնագիտական գրականության համալրում և այլն): Այդուհանդերձ, մասնաճյուղի տարեկան եկամուտները 2018թ.-ի ավարտին 2015թ.-ի համեմատ աճել են **10.5%**-ով (***ԳԱՅ 2014-19, ցուցանիշ 3.4***):

Եկամուտների բազմազանեցումը եղել է ԵՊՀ ԻՄ-ի ընթացիկ և կարևոր գերակայությունը, որի ապահովման համար 2018թ.-ին ստեղծված բիզնես ծրագրի մշակման հանձնաժողովը նպատակադրվել է ներգրավել նաև ուսանողներին՝ ծրագրի ստարտը, զարգացումը և շարունակական կապը ուսանողների հետ ապահովելու համար, այն ունի նաև տարածաշրջանային ռազմավարական նշանակություն:

ԵՊՀ ԻՄ–ի ֆինանսական միջոցների 2/3-ն ուղղվում է բարձրորակ կրթության ապահովմանը: Յուրաքանչյուր տարվա ծախսերի հետ զուգընթաց աճել են նաև ուսումնական ծախսերը: 2015թ.-ի համեմատ 2018թ. ուսանողների թվի **7.7%-ով** նվազման պարագայում, ուսումնական ծախսերը աճել են **10.2%-ով,** ուսումնաօժանդակ ծախսերը՝ **22.3%-ով** և մեկ ուսանողին ընկնող տեսակարար ուսումնական ծախսը՝ **19.3%-ով**: Նույն ծախսերի աճը 2017թ.-ի համեմատ համապատասխանաբար կազմել են՝ **7.3%, 9.7%, 17.2%** (***ԳԱՅ 2014-19, ցուցանիշներ 3.8,3.9/էջ 48,49***):

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

ԵՊՀ ԻՄ-ում ֆինանսական միջոցները բաշխվում են քայլերի հետևյալ հաջորդականությամբ. կազմվում է բյուջեի նախագիծը՝ հիմքում ունենալով հաշվապահության կողմից հաշվարկված եկամուտները, կատարվելիք ընդհանուր ծախսերը (աշխատավարձ, սոցիալական

վճարներ, պետական հարկեր, կոմունալ վճարումներ և այլն) և մասնաճյուղի ստորաբաժանումների կարիքներից բխող հայտերը, որը քննարկվում է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նիստում և հավանության արժանանալու դեպքում հաստատվում է ԵՊՀ ռեկտորի և գլխավոր հաշվապահի կողմից:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ֆակուլտետները մասնաճյուղի ղեկավարությանն են ներկայացնում հաջորդ ուստարվա ամբիոնային ուսումնական ծանրաբեռնվածությունները, որոնց հիման վրա կատարվում է դասախոսների հաստիքների ձևավորումը և աշխատանքի վարձատրությունը: Ֆինանսական ռեսուրսների բաշխման մեխանիզմներից է առանձին ստորաբաժանումների հայտերի հիման վրա մասնաճյուղի կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը, որն իրականացվում է 2013թ.-ից ստեղծված Գնումների, մատակարարման և պահեստավորման բաժնի կողմից՝ համաձայն բաժնի կանոնադրությամբ ամրագրված գործառույթների:

Մասնաճյուղը հետևում է բյուջեի կատարմանը և յուրաքանչյուր եռամսյակը մեկ քննարկում է բյուջեի կատարողականը, որոշում կատարվելիք անհրաժեշտ փոփոխությունները, պլանավորում հաջորդ եռամսյակի եկամուտները և ծախսերը:

Մասնաճյուղի ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ ամեն տարի տրվում են անկախ աուդիտորական եզրակացություններ (Մայր բուհում աուդիտ կատարած խումբը աուդիտ է անցկացնում նաև մասնաճյուղում): Դրանցում մասնավորապես նշվում է, որ ԵՊՀ ԻՄ-ի ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են ֆինանսական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

ԵՊՀ ԻՄ-ի միջոցների կառավարման և օգտագործման արդյունավետության բարձրացումը գտնվում է ԵՊՀ ռեկտորի և մասնաճյուղի տնօրենի ուշադրության կենտրոնում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

ԵՊՀ ԻՄ-ում կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը կատարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն: ԵՊՀ ԻՄ-ն նախապես պլանավորում է առաջիկա ֆինանսական տարվա համար պահանջվող ռեսուրսները՝ դրանց գնման գործընթացն ըստ օրենքի պահանջի իրականացնելու համար (մրցույթի հայտարարում, մատակարարների ընտրություն և այլն): Ուսումնական կարիքների բավարարման և արդյունավետ պլանավորման նպատակով բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները, ֆակուլտետները, ամբիոնները տարեվերջին ներկայացնում են գալիք տարվա ընթացքում անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցանկը: Վերջինիս հիման վրա կազմվում է գալիք տարվա գնումների պլանը, որում ընդգրկված ապրանքներն ու ծառայությունները գումարային տեսքով արտահայտվում են բյուջեի նախահաշվի համապատասխան հոդվածներում: Տարվա ընթացքում կառուցվածքային ստորաբաժանումները, ամբիոնները և ֆակուլտետները, ելնելով կրթական ծրագրերի իրականացման և ընթացիկ գործունեության կազմակերպման պահաջներից, զեկուցագրի հիման վրա ձեռք են բերում գնումների պլանում իրենց ներկայացրած ապրանքներն ու ծառայությունները:

Ռեսուրսները ժամանակին բաշխելու մեխանիզմները և ընթացակարգերը կանոնակարգվում են մասնաճյուղի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով, աշխատանքային

պայմանագրերով և աշխատանքների կատարման ժամանակացույցով (հաշվի առած մասնաճյուղի գործունեության առանձնահատկությունները):

Գործող կրթական ծրագրերի ռեսուրսային ապահովվածության գնահատման մեխանիզմ է հանդիսանում նաև կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգը, ըստ որի նախատեսվում է մեկամյա պարբերականությամբ գնահատել ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը, ապա անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ ռեսուրսների ձեռքբերման հայտերը հասցեագրել գնումների, մատակարարման և պահեստավորման բաժնին: Ռեսուրսների ձեռքբերումն իրականացվում է կենտրոնացված ձևով՝ բոլոր կրթական ծրագրերի համար համատեղ, իսկ դրանց բաշխումը՝ ըստ առանձին ծրագրերի ռեսուրսային կարիքների:

Ռեսուրսների պլանավորման և ձեռքբերման տեսանկյունից կարևորագույն գործոններ են հանդիսանում մասնագիտությունների կրթական ծրագրերի փոփոխությունները և նրանցում ուսանողների թվաքանակը: Քանի որ ընդունելությունը կազմակերպվում է ըստ պլանավորված և ՀՀ ԿԳՆ-ի կողմից հատկացված լիցենզավորման տեղերի թվերի, ուստի ռեսուրսների կարիքների կտրուկ ավելացումներ կամ նվազեցումներ, որպես կանոն, տեղի չեն ունենում: Այդուհանդերձ, ուսանողների թվի որոշակի ավելացման դեպքում մասնաճյուղը կկարողանա համապատասխան քանակի ռեսուրսներ ապահովել, օրինակ՝ լրացուցիչ ծանրաբեռնել դասավանդողներին կամ նոր դասավանդողներ ընդունել աշխատանքի և այլն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացների արդյունավետ կառավարումը, զարգացումը, օգտագործման ու մատչելիության ապահովումը մասնաճյուղի կարևոր ռազմավարական խնդիրներից է (**խնդիր 8.3**), որի լուծման ուղղությամբ տարվում են համապատասխան աշխատանքներ: ԵՊՀ ԻՄ-ում տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարումն իրականացվում է համաձայն «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գործավարության կազմակերպման կարգի», տեղեկատվության և փաստաթղթերի հասանելիությունն ապահովվում է թղթային և միասնական ներքին համակարգչային ցանցի, էլեկտրոնային փոստերի և մասնաճյուղի պաշտոնական կայքի միջոցով, իսկ ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվության պահպանման և փաստաթղթաշրջանառության ապահովման համար ներդրված է SuperVision YSU էլեկտրոնային տեղեկատվական համակարգը:

2009թ. մասնաճյուղում ներդրված SuperVision YSU տեղեկատվության կառավարման բազմաֆունկցիոնալ ցանցային համակարգն իրականցնում է ուսումնական պլանների, ամբիոնների և դասախոսների բեռնվածության ավտոմատ բաշխում, ուսանողների ուսումնական տվյալների հավաքագրում, մշակում և առաջադիմության վերահսկում, դիպլոմի համաեվրոպական նմուշի հավելվածի պատրաստում: Նրա գործարկումը բարելավել է տեղեկատվության հավաքման և կառավարման արդյունավետությունը:

Մասնաճյուղի ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և տեղեկատվության հասանելությունն ապահովվում է գլխավորապես ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայքի միջոցով: Նրա «Փաստաթղթեր» բաժնում զետեղվում են ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի և ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշումներն ու նիստերի արձանագրությունները, կանոնադրությունները, կանոնակարգերը և կարգերը, հայեցակարգերը և այլ նորմատիվ փաստաթղթեր, մասնաճյուղի տնօրենության որոշումներն ու նիստերի արձանագրությունները, մասնաճյուղի գործունեության, ռազմավարական ծրագրի կատարողականի, բյուջեի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունները և այլն:

Ուսումնական գործընթացներին վերաբերող տեղեկատվության հասանելիությունը ներքին և արտաքին շահակիցներին նույնպես ապահովվում է մասնաճյուղի պաշտոնական կայքի միջոցով: Նրա ֆակուլտետների և ամբիոնների ենթաբաժիններում տեղադրվում են մասնագիտությունների բակալավրի կրթական ծրագրերը, կրեդիտային համակարգով ուսումնառության կազմակերպման ուղեցույցները, ուսումնական պլանները, դասացուցակներն ու քննաշրջանի ժամանակացույցերը, ուսանողների առաջադիմության ամփոփները, ֆակուլտետների և ամբիոնների աշխատանքային պլանները, խորհրդատվական ծառայություն-ների, ամբիոնների նիստերի և փոխադարձ դասալսումների ժամանակացույցերը, պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի ներկայացուցիչների գիտամեթոդական աշխատանքների ցուցակները, դեկանի, ամբիոնի վարիչի, պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների մրցույթների վարաբերյալ հայտարարությունները և այլն:

Մասնաճյուղում գործող հաշվետվողականության համակարգը և փաստաթղթերի թափանցիկության ու հասանելիության ապահովումը նպաստում է բուհի կառավարման արդյունավետության բարձրացմանը (**ՌԾ. խնդիր 8.3**): Այդ են վկայում ներքին շահակիցների մասնաճյուղից բավարարվածության 2019թ.-ի հարցման արդյունքները.

Բավարարվածությունը.	**վարչական անձնակազմ** (էջ 5)	**դասախոսներ** (էջ 9,10)	**ուսանողներ** (էջ 5)
տեղեկատվության լիարժեքությունից	**4,5** / 90%	**4,1** / 82%	73%
լուսաբանումից	**4,4** / 88%	**4,3** / 86%	74%

ԵՊՀ ԻՄ-ում փաստաթղթաշրջանառության իրականացման համար գործող միասնական համակարգչային ներքին ցանցին միացված են շուրջ 180 համակարգիչներ, իսկ գործընթացը կանոնակարգում է ԵՊՀ ԻՄ-ի Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման (ԱԿԻԱ) բաժինը՝ համաձայն իր կանոնադրության (**22.02.2020թ.**):: Բաժինը կարգավորում է փաստաթղթերի ընդունման, գրանցման և ներքին փաստաթղթաշրջանառության ընթացակարգերը, պարզաբանում մասնաճյուղի գիտական խորհրդի քննարկմանը ներկայացվող նախագծերի, մասնաճյուղի տնօրենի հրամանների ու այլ փաստաթղթերի նախագծերի նախապատրաստման ու դրանց շարժի, ԵՊՀ ԻՄ-ի ելից փաստաթղթերի շարժի ու առաքման, կառուցվածքային ստորաբաժանումների փաստաթղթաշրջանառության, փաստաթղթերի էլեկտրոնային պահպանման ու արխիվացման հետ կապված հարցերը: 2018 թվականից ԱԿԻԱ բաժինը և հաշվապահությունն իրենց աշխատանքներն իրականացնում են ՀԾ ծրագրով, որի արդյունքում արդյունավետ իրականացվում է տեղեկատվության, մասնավորապես հրամանների, էլեկտրոնային փոխանցում այդ երկու բաժինների միջև՝ ապահովելով անձնական և ֆինանսական տվյալների հաշվառումներ: Տեղեկատվության հասանելիությանը մեծապես աջակցում է 2012 թվականից գործող Հասարակայնության հետ կապերի և մամուլի ծառայու-թյունը, որը տարբեր մեխանիզմներով, առանձնապես մասնաճյուղի պաշտոնական կայքի միջոցով, հասարակությանն իրազեկում է մասնաճյուղի, նրա կառուցվածքային և առանձնաց-ված ստորաբաժանումների (արհիբյուրո, ուսանողական գիտական ընկերություն, ուսանողական խորհուրդ և այլն), տնօրենի և այլ պաշտոնատար անձանց գործունեության մասին:

ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական պլանավորմամբ նախատեսվել էր ստեղծել միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգ, զարգացնել մասնաճյուղի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը (**ՌԾ, գործ. 8.3.3**) և ապահովել վերջինիս մատչելիությունը ուսանողների և աշխատակիցների համար: 2018 թվականից մասնաճյուղում փաստաթղթաշրջանառությունը մասնակի իրականացվում է «Mulberry» առցանց ծրագրով:

Նախատեսվում է այդ ծրագրի կիրառումը մասնաճյուղի բոլոր ենթակառուցվածքներում՝ ամբողջ փաստաթղթաշրջանառության իրականացման համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ԵՊՀ ԻՄ-ում աշխատակիցների և ուսանողների առողջության ու անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների գործունեությունը գտնվում է մասնաճյուղի ղեկավարության անմիջական ուշադրության կենտրոնում: Այդ ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով տարին մեկ անգամ, ներքին շահակիցների մասնակցությամբ, քննարկվում և վերլուծության են ենթարկվում իրականացված աշխատանքները, որի ընթացքում պարզվում են այն պատճառները, որոնք խանգարում են նշված ծառայությունների կողմից իրականացվող աշխատանքների արդյունավետ կատարմանը:

2020 թվականի մարտին մասնաճյուղը և «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ընկերությունը պայմանագիր են կնքել, որի համաձայն ԵՊՀ ԻՄ-ի հիմնական աշխատակիցներն արդեն կարող են օգտվել առողջության ապահովագրությունից (**20.03.2020թ.**):

Անվտանգ և առողջ միջավայրի ապահովման բնագավառում ԵՊՀ ԻՄ-ի թերացումներից է հատուկ կարիքներ ունեցող անձանց համար անհրաժեշտ ենթակառուցվածքների պակասը, հետևաբար նրանց ուսումնառության ոչ լիարժեք կազմակերպումը: Խորհրդային ժամանակաշրջանում կառուցված մասնաշենքերում հաշվի չեն առնվել դժվարությամբ տեղաշարժվող մարդկանց կարիքները: Տեղաշարժման, լսողության, տեսողության և այլ խնդիրներ ունեցող մարդկանց համար համապատասխան պայմանների ստեղծումը ֆինանսական մեծ միջոցներ է պահանջում, ինչը դեռևս վեր է մասնաճյուղի ուժերից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ- ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ԵՊՀ ԻՄ-ում ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների օգտակարության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներն են դասավանդողների, շրջանավարտների և ուսանողների ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ անցկացվող հարցումները, կազմակերպվող քննարկումներն ու հանդիպումները:

ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման հարցաթերթը ներառում է ռեսուրսների ու ծառայությունների օգտակարությունը, հասանելիությունն ու արդյունավետությունը գնահատող հարցեր, ինչպես նաև կարծիքների և առաջարկությունների առանձին բաժին: Ըստ 2018-19 ուստարվա հարցման արդյունքների մասնաճյուղի շրջանավարտներն ընդհանուր առմամբ գոհ են տրամադրվող ռեսուրսներից և ծառայություններից (**էջ 5,6**), ինչի մասին վկայում են լսարանների վիճակին և կահավորանքին, համակարգչային սրահների մատչելիությանն ու կահավորանքին, համացանցի մատչելիությանը տված նրանց գնահատականները, որոնք ընկած են **4.23-4.59** միջակայքում: Նախորդ տարիների համեմատությամբ հատկապես բարձրացել է լսարանների կահավորումից բավարարվածության գնահատականը (**էջ 6**): Շրջանավարտները բավարարված են գրադարանի կահավորանքից (միջ.գն. **4.5**), աշխատաժամերից և սպասարկումից (միջ.գն. **4.5**), և բավարարված չեն գրադարանում առկա մասնագիտական գրականության քանակից և որակից (**էջ 6**), այստեղ իր դերակատարումն ունեն մասնաճյուղում իրականացվող մի քանի սպեցիֆիկ կրթական ծրագրերը:

Մասնաճյուղի ռեսուրսներից ուսանողների և դասավանդողների բավարարվածության գնահատում իրականացվում է ՄԿՈԱ բաժնի կողմից 2013թ.-ից ամենամյա անցկացվող մասնաճյուղից բավարարվածության հարցումներով: Այդ հարցումների միջոցով հավաքագրված առաջարկներն ու կարծիքները համապատասխան ֆակուլտետներում և ստորաբաժանումներում քննարկվելուց հետո կազմվում են առաջարկությունների փաթեթներ և ներկայացվում մասնաճյուղի ղեկավարությանը: Նշենք, որ և ուսանողների և դասախոսների կողմից մշտապես կատարվում են մասնաճյուղի ներկա կրթական զարգացումներին համահունչ առաջարկներ: Այդ խնդիրներին նվիրված բազմաթիվ քննարկումների վերաբերյալ տեղեկությունները մշտապես ներկայացվում են մասնաճյուղի կայք էջում:

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներում նույնպես ուսանողները նշում են մասնաճյուղի կողմից տրամադրվող ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների վերաբերյալ իրենց կարծիքները և առաջարկները:

Ռեսուրսներից և մատուցվող ծառայություններից ներքին շահակիցների բավարարվածության արդյունքները վկայում են, որ այդ գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումները հիմնականում հիմնվում են նրանց կողմից ստացվող տեղեկատվության վրա:

Ուսանողները հնարավորություն ունեն տրամադրվող ռեսուրսների վերաբերյալ իրենց հուզող հարցերը բարձրացնել և ստանալ պատասխաններ նաև ֆակուլտետների գիտական խորհուրդների ու դեկանատների նիստերի ժամանակ: Բացի այդ, արագ արձագանքման արկղերի միջոցով կարող են հարցեր և առաջարկություններ ուղղել ղեկավարությանը:

Ուժեղ կողմեր (Strengths)	Հնարավորություններ (Opportunities)
1. Մասնաճյուղի գործունեության իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների և ռեսուրսների առկայություն 2. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մասնաճյուղի տարածքի և ենթակառուցվածքների անհատույց, անժամկետ տրամադրում 3. Անվճար, անսահմանափակ, գերարագ ինտերնետի (օպտիկամալուխային կապուղի) և WiFi կապերի առկայություն 4. Մասնաճյուղում ներքին համակարգչային ցանցի առկայություն և ավտոմատացված էլեկտրոնային համակարգերի առկայություն 5. ԵՊՀ-ի ռեսուրսներից օգտվելու հնարավորություն (գրադարան, տպարան, լաբորատորիա, հանգստյան տներ և այլն) 6. ԵՊՀ-ի կողմից ֆինանսական և նյութական ռեսուրների պարբերաբար տրամադրում 7. Օնլայն լսարանների առկայություն 8. Անվտանգության ծառայության առկայություն 9. Ռեսուրսների գնահատման մեխանիզմների առկայություն 10. Հրավիրված դասախոսների համար հարմարավետ հյուրանոցի առկայություն 11. Մասնաճյուղի հարևանությամբ սննդի կետերի առկայություն 12. Սեփական տրանսպորտային միջոցների առկայություն	1.Տեղական, մասնավոր և միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսական միջոցների տրամադրում 2.Տարածաշրջանում լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցում 3.ԵՊՀ կողմից նպատակային ծրագրերի ֆինանսավորում մասնաճյուղում
Թույլ կողմեր (Weaknesses)	Վտանգներ (Threats)

1. Առանձնացված ընթերցասրահի բացակայություն 2. Մասնագիտական գրականության պակաս գրադարանում 3. Որոշ համակարգիչների ոչ արդիական լինելը 4. Հատուկ կարիքներով անձանց համար մասնաճյուղում անհրաժեշտ պայմանների բացակայություն 5. Լաբորատորիաների թերի հագեցվածություն 6. Ուսումնական և հետազոտական անհրաժեշտ ֆինանսական անբավարար միջոցները 7. Շենքային ոչ տիպային պայմաններ Բաց սպորտային հրապարակի բացակայությունը	1. Այլ ֆինասնական մուտքերի բացակայություն 2. Դիմորդների թվի նվազում 3. Պետության կողմից տրամադրվող թույլ աջակցություն Տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վատ վիճակ

Մասնաճյուղի առաքելությունն իրականացնելու և նպատակներին հասնելու համար որոշիչ դեր են խաղում ռեսուրսները և ենթակառույցները, քանզի կրթական գործընթացների հաջող ընթացքը և ավարտը անմիջականորեն կախված են մարդկային և նյութական գործոններից: Գործող ենթակառուցվածքներն ունեն հստակ սահմանված գործառույթներ, որոնք բխում են մասնաճյուղի ռազմավարական ծրագրից:

Նյութական ռեսուրսների ավելացման ուղղությամբ տնօրենությունը նախատեսում է վարել այնպիսի քաղաքականություն, որպեսզի ընդլայնվեն արտաքին շահակիցների շրջանակները, գտնվեն ֆինանսական հոսքերի ավելացման նոր ուղիներ և ուսումնասիրվեն կրթական լրացուցիչ ծառայություններ մատուցելու հնարավորությունները:

Մասնաճյուղի ենթակառուցվածքների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար նախատեսվում է.

- ձեռք բերել ժամանակակից տեխնիկական սարքավորումներ,
- ավելացնել և բազմազանեցնել ֆինանսական մուտքերը,
- ապահովել մարզադահլիճի հագեցվածությունը,
- պարբերաբար թարմացնել մասնագիտական գրականությունը,
- վերազինել ուսումնական լաբորատորիաները,
- հնարավորինս հարմարեցնել շենքային պայմանները՝ համալսարանական միջավայրի պահանջներին: